

Աբրահամ Կրետացի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



eMatenadaran.

Աբրահամ Կրետացի Պատմութիւն

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24431102

Պատմութիւն:

ISBN 9781772467918

Аннотация

«Պատմութիւն» երկը (բաղկացած է 53 գլխից, առաջին անգամ հրատարակվել է 1796 թ. Կալկաթայում), որտեղ նկարագրվում է Թահնագ Ղուլի խանի պատերազմները Անդրկովկասում եւ Մուղանի դաշտում 1736 թ.-ի մարտի 10-ին Թահնագ Ղուլիին շահ թագադրելու արարողությունը: Կրետացու «Պատմագրությունը» տպագրվել է 1796 թ.-ին, Կալկաթայում եւ 1870 թ.-ին՝ Վաղարշապատում: Այն ֆրանսերեն է թարգմանել Բրոսեն եւ հրատարակել «Collection d'historiens armeniens» ժողովածուում:

Содержание

[U]	4
[F]	6
[q]	8
[r]	10
[t]	12
[Q]	14
[L]	17
[r]	20
[p]	21
[j]	22
[jU]	23
[jF]	27
[jq]	29
[jr]	31
[jt]	35
[jQ]	36
[jL]	39
Конец ознакомительного фрагмента.	43

Աբրահամ Կրետացի Պատմութիւն

[Ա]

Նախասահմանութիւնն Աստուծոյ ոչ վրիպի ըստ վկայութեան սուրբ գրոց: Չի գոր ինչ կամի Տէր՝ զայն առնէ, եւ ո՞ է նմա խորհրդակից: Եւ այն թէ Տէր խոնարհեցուցանէ եւ Տէր բարձրացուցանէ, մեծացուցանէ եւ Տէր աղքատացուցանէ եւ այլն: Իսկ մերս նուաստ բնութիւնս թոյլ եւ գիտութիւնք շաղփաղբունք են, եւ հազիւ նկատենք գերկրաւորս ըստ ասելոյն:

Վասն որոյ ոմանք ի բարոյ սկսեալ գչարն աւարտեն: Եւ ոմանք ի շարէն սկսեալ ի բարին եզերեն: Բայց բիր երանութեան արժանի նոքա են, որ ի բարոյն սկսեալ ի բարին կատարեն: Իսկ ամենաբարին Աստուած եւ աղբիրն բարութեան միշտ զբարի բաղձանս շնորհեաց բնութեանս, թէպէտ՝ ոմանք ի թիր գործածեն: Արդ եթէ ի բարին հետեւին, գործակից լինի նոցա ի բարիս ըստ առաքելական վկայութեան:

Քանզի զկարօտութիւն գոր ունէի ի մանկութենէ իմմէ՝ որ վասն սրբոց աթոռոց եւ եւս վասն Հայաստան երկրի վանորայից եւ ուխտատեղաց, շնորհեաց Աստուած անարժան անձինս: Նախ՝ գնալ ի սուրբ Սաղիմ

թվին ՌՃԿ (1719) մնալով անդ Բ (2) ամ՝ ի ժամանակս նորոգութեան աշխարհագումար տաճարին սրբոյ Յարութեան եւ ամենայն սրբոց տնօրինականաց ի Ժ (10) ամի առաջնորդութեան իմոյ Թրակիոյ քաղաքին, ի պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ Գրիգորի ճգնագգեաց եւ հեզահոզի սրբագան վարդապետի եւ առաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ Յովհաննէս քաջաջան աստուածաբան վարդապետի՝ աշակերտաց Վարդանայ վարդապետին Բաղիշեցոյ ի վանից Ամրտօլոյ:

Իսկ ի թուին ՌՃՁԳ (1734) եւ ապրիլի ԻԷ (27) շուեցի ի Թրակիոյ՝ գնալ ի սուրբ Էջմիածին եւ ի Տարօն՝ ի սուրբ վանքն Գլակայ, որ յանուն սուրբ Կարապետին է կառուցեալ ի սրբոյն Գրիգորէ՝ մեր Լուսաւորչէ: Որ եւ ի Ճ (100) օրն հասանք սուրբ Էջմիածին աշխարհաբոյժ տաճարն օգոստոսի Գ (3) օրն շաբաթ, երրորդ ժամու:

[Բ]

Արդ ի գալն մեր ի սուրբ աթոռն եւ յետ համբուրելոյ գտեանս սրբոյ տաճարին եւ երկրպագելոյ սուրբ իջման տեղին եւ այլոց աստուածաբնկալ սուրբ խորանացն առժամայն առեալ տարան գմեզ առ Աբրահամ վեհապետն սրբագան կաթողիկոսն, որ էր նստեալ ի պարտեզն՝ ի ներքոյ մեծի այվանին: Եւ ի տեսանելն գմեզ խանդաղատեցաւ եւ յոյժ ուրախացաւ: Ջի սաստիկ սէրն, որ արծարծեալ էր ի սրտի մերում Ի (20) ամէ ի վեր, բոցափայլեալ յայտնի երեւիր: Եւ յետ գրուցատրութեան մերում եւ հարցաքննելոյն գորկենութենէ պատրիարգի եղբօր մերոյ, եւ գմեծ քաղաքէ Կոստանդնուպօլսոյ, եւ զեկեղեցեաց, եւ զիշխանաց եւ զքահանայից հարին զերրորդն, եւ ետ ինձ հրաման գնալ ի մենարանն իմ:

Եւ առեալ տարան զիս ի յԱղեքսանդրու սրբոյ կաթողիկոսի ամարաթն, որ էր եւ այն ի ներքո անդ ի կաթողիկոսարանի: Եւ ապա հարին զպատարագին գանգակն: Եւ ելեալ գնացաք ի պատարագն եւ յետ պատարագին՝ ի սեղանն: Եւ այնուիետեւ ամենայն օր ընդ իւր ունելով զիս՝ ի տուն եւ առտնին, ի գրուցատրութիւնս եւ ի խորհրդակցութիւնս միշտ մինչեւ ցաւորս Ի (20):

Եւ ապա կամեցայ հրաման առնուլ եւ գնալ ի սուրբ Կարապետ: Եւ ոչ ետ թոյլ, ասելով, թէ՛ «Ջքեզ ինձ Աստուած առաքեաց, տեսանելով զխղճութիւնս իմ: Վասն որոյ այսմ

ամի գոնէ ոչ թողում գնալ, այլ կաց մնայ ի գիրկս եւ գոգ մօր քո լուսոյ սուրբ Էջմիածնիս եւ լեր ինձ խորհրդակից, ցաւակից եւ կարէկից: Եւ գիտեմ զհարագատութիւն քո ի հեռուն հետէ, եւ վկայէ հոգի իմ, զի բարեկամ եւ հաւատարիմ ես ինձ, որպէս եւ իմայնոցն, որպէս լուեալ եմ այսքան տարի, նաեւ՝ ի սուրբ գահիս: Եւ որքան պաղատեցի եւ աղաչեցի, չեղեւ հնար, եւ ոչ ետ թոյլ եւ հրաման այլ ասաց. «Եթէ Տէր կամեսցի, ի գալ ամի եւ ես կամիմ գնալ ի Տարօն՝ եթէ յաջողութիւն լիցի յԱստուծոյ: Կաց առ իս աստէն, եւ ի միասին գնասցուք, եւ անդ կատարեալ գոլխտ քո եւ ճանապարհորդեցից զքեզ գնալ ի վիճակն քոն:

Որով խնդրեցի կրկին տալ հրաման իմայնոցն, որք եկեալք էին ընդ իս՝ գնալ ի սուրբ Կարապետն յուխտ եւ անտի՝ ի տեղիս իրեանց. որք էին Յարութիւն վարդապետն. եւ Թէքիրտաղու աւագերէց տէր Յովհաննէսն, տէր Յունանն, տէր Պօղոսն եւ, պողագիսարցի տէր Գասպարն եւ այլ ստանալօցիք եւ թէքիրտաղցիք՝ աւելի քան զԻ (20): Յանձնելով գնոսա յԱստուծոյ եւ Կաղզուանայ առաջնորդ Յովհաննէս վարդապետին, որ եղեւ նոցա առաջնորդ, եւ առեալ տարաւ Կաղզուանով գնոսա, որ էր օգոստոսի ԻԳ (23) եւ օրն շաբաթ: Եւ ես խոստացայ մնալ մինչեւ ցայգէկութն, եւ ապա չուիլ: Որ եւ ծիծաղեցաւ երանելին եւ ասաց. «Բարի է, այնպէս եղիցին:

[Գ]

Յետ յողեորելոյ գողայսն ի սուրբ Կարապետ առաջիկայ երկուշաբթին, որ էր օգոստոսի ԻԷ (27), հրաման ետ սպասատրացն պատրաստութիւն տեսանել առ ի գնալ ի վանորայսն: Քանզի ասաց, թէ՛ «Եւ իմ սիրտս կարի նեղացեալ է, զի հեռուն հետէ ի դուրս չեմ ելեալ»: Եւ առեալ զիս ընդ իւր եւ գայլս ի վարդապետացն՝ անլի քան զԺ (10), եւ այսպէս ուրախութեամբ գնացինք:

Նախ՝ ի Յոհաննավանքն զի առաջնորդն Յոհաննավանից՝ Յակոբ վարդապետն, եկեալ հրավիրեաց զվեհն վասն օծման նորաշէն խորանին եւ սեղանոյն, որ նորոգեալ էր հիւսիսակողմն մեծի տաճարին, որ էր շինեալ եւ նա ի սրբոյն Գրիգորի՝ մեր Լուսաւորչին, եւ ամփոփեալ անդ ի մասանց եւ ի նշխարաց սրբոյն Յամլորդոյն: Որ մեծաւ հանդիսի օծեցաք զսեղանն ի միասին:

Եւ յետ հոգեոր եւ մարմնաւոր ուրախութեան՝ Բ (2) – Գ (3) օր կենալոյն զկնի, գնացինք ի Սաղմոսավանք, եւ ի Լուսաւորչայ անապատն եւ ի միւս փոքր անապատն: Եւ ապա՝ ի յՈւշի՝ սուրբ Սարգսայ վանքն: Եւ մինչ էինք անդ, եկն եւ մէլիքն Երեւանայ՝ Յակոբջանն, զի խնդրեալ էր գնա վեհն:

Եւ ի նոյն ատուրս եկն սայի մի ի Թիֆլիզոյ եւ եբեր զրոյց եւ զիր, եթէ՛ Իսակ փաշայն, զԱշխալ բեկն որ էր մէլիք Թիֆլիզոյ՝ ի մեր ազգի, վասն ոչ ինչ պատճառի ետ խեղդել

գնա եւ առաջի դրանն արկանել՝ մինչեւ Էառ ԾՌ- (50000) դուռուշ, եւ ապա ետ հրաման թաղել:

Իսկ ի միւս օրն գնացեալ ի Փարպի ըստ խնդրոյ իմոյ: Եւ անտի դարձաք ի Կարբի՝ ի տուն պարոն Խաչատուրին եւ պարոն Ղազարին, մնալով անդ գիշեր մի: Եւ ապա եկինք ի Մուղնի սուրբ Գեորգայ վանքն: Էր ընդ մեզ եւ մելիք Յակոբջանն՝ տկար գոլով: Եւ մնացինք զգիշերն: Իսկ ի լուսանալն՝ յետ սրբոյ պատարագին եւ ճաշոյն, իջաք ի յՕշական: Եւ մելիքն գնաց Եդուարդով Երեւան: Եւ գիշերն մնացանք յՕշական եւ յայգն շուեալ հասանք ի սուրբ Էջմիածին:

[Գ]

Որովհետեւ առաւել սիրոյն, զոր ունէր ընդ հիգոյս առեալ զիս վեհն՝ զքօսանաց աղագաւ գնացինք ի վանորայս եւ յանապատս: Բայց ոչ կարացին տեւել անդանօր ի սուրբ ուխտն՝ վասն զբաղմանցն եւ մեծի հոգունակութեան սուրբ աթոռոյն: Եւ զի աւելի քան զԼ (30) սարդ կայինք՝ նոյնպէս եւ առաւել գրաստքն, եւ թուիր ձանձրութիւն լինիլ ասպնջակացն մերոց: Եւ զի նրբահայեաց գոլով Վե (հե)հն եւ յոյժ ցաւեցող վասն ամենեցուն՝ ոչ կամէր բնաւ զձանձրանալն ունէք, վասն որոյ աճապարէր դառնալ ի սուրբ գահն:

Մանաւանդ զի էր եւ ժամանակն խառնակ, եւ ազգի-ազգի գրոյցք գային ի լսելիս վեհին վասն գալստեան Թահնագ [ղոլի] – խանին եւ շարժելոյ զօրացն պարսկային, փութացաւ գդարձն անդրէն առ ի սուրբ աթոռն, զի հոգասցէ զհոգս ամենեցուն: Եւ զի այսպէս բնաւորեալ է ի բնութիւնս մերագնեացս ի բնուստ անտի՝ ոչ հոգալ, եւ ոչ ցաւել եւ ոչ փոյթ ունել յամենայնէ, այլ իւրաքանչիւր զիւր հանգստութիւնն ջանալ, եւ ապահովիլ եւ պաշտիչ ուրուականին իւրոյ լինել, իսկ զամենայն ցաւս ընկենուլ ի վերա գլխոյն: Եւ մինչ կենդանի է թէ՛ իրաւի, եւ թէ՛ անիրաւ, սակաւ մի ցաւեցող ցուցանել զինքն մեծաւորին իւրոյ, եւ այնպէս թուի ինձ՝ վասն օգտի անձին իւրոյ իսկ եւ բարեկեցութեան: Եւ յետ վախճանին այլ ոչ յիշել ամենեւիմք

Եւ ոչ ցաւիլ, այլ փոխանակ ցաւելոյ եւ կսկծելոյ՝ եպերել
եւ հեզնել, որպէս ի բնուստ անտի ունին զայն ազգն մեր,
որոյ զպատճառն ոչ այլ ինչ գիտեմ, եթէ ոչ՝ զտգիտութիւն եւ
զապերախտութիւն:

Բայց ես կրկին հրաման առի ի վեհէն գնալ ի սուրբ
անապատն Լուսաւորչայ եւ մնալ անդ շաբաթ մի առանձին,
եւ ապա գալ: Եւ ետ հրաման գնալ: Որ եւ եկեալ հայրն
անապատին՝ Յոհան վարդապետն, իբրոյ խնդրելով զիս ի
վեհէն: Էառ եւ տարաւ յանապատն: Եւ գնացեալ մնացի անդ
շաբաթ մի եւ դարձայ ի սուրբ աթոռն:

[Ե]

Եւ յետ ոչ բազում ատուրց կրկին հրամ[ան] առի ի վեհէն՝ գնալ ի հեռագոյն վանորայսն Արարատու: Եւ թէպէտ ոչ կամէր հրաման տալ, վասն զի եւ ինքն փափագ ունէր տեսանել զայն ուխտատեղսն, զոր ոչ էր տեսեալ բնաւ ի վեհապետութեանն իւրոյ, եւ պատճառանօք իմիք փափագէր եւ երանելի հոգին տեսանել, բայց ցան ժամանակիս եւ զբաղմունքն ոչ ետուն թոյլ: Վասն որոյ անճարացեալ ետ ինձ հրաման:

Եւ ելեալ ի սուրբ աթոռոյն՝ տկարացեալ անձամբ, գնացի այնու մտօք ի հաւատով, զի բուժիցիմ ի չարաչար տենդէ ցաւոյս: Եւ գնացի նախ՝ Երեւան, որ էր հոկտեմբեր ԺԶ (16), եւ մի գիշեր մնացի Երեւան: Եւ միւս օրն գնացի ի սուրբ Վիրապ, եւ անտի ի Ակոռի եւ ի սուրբ Յակոբայ աղբիւրն՝ ի Մասիս: Եւ անդ կատարեալ զուխտն իմ եւ մատուցանել ետու պատարագ: Եւ կատարեալ մեր զուխտն եւ դարձաք ի գիւղն Արկուտին:

Եւ անդ սակաւիկ մի հանգչեալ եւ ճաշ արարեալ՝ դարձաք ի Վիրապն: Եւ ի Վիրապին յատակն իջեալ իմ ժամրարական պատրաստութեամբն՝ ասարտեցի զպատարագն եւ ելեալ ի Վիրապէն մնացի զգիշերն: Եւ այգուցն առ[ե]ալ ընդ իս առաջնորդ ճանապարհին արեղայ մի, գնացի ի Հաւուց Թառ, որ է Ամենափրկչի վանք, եւ մնալով անդ Բ (2) գիշեր: Եւ անտի՝ ի Աղշոց վանքն: Եւ դարձայ ի

սուրբ Գեղարդն մնալով անդ եւ Բ (2) գիշեր: Եւ անտի եկի ի Գառնի, մնալով գիշեր մի: Եւ անտի՝ ի Նորք, մնալով անդ եւս գիշեր մի: Եւ ապա գնացի ի յԵրեւան, եւ գիշեր մի եւս մնացի անդ:

Եւ ապա գնացի ի Գետարգել: Եւ անդ հասան հրաւիրակքն վեհին, զոր երկիցս եւ երիցս մարդ էր յղեալ գրով եւ թղթով՝ խնդրելով զիս շեշտի եւ արագ արագ հասանել նմա: Նախ՝ վասն կարօտութեան երանելոյն: Երկրորդ՝ վասն գալոյ Թօխաթու նուիրակին՝ Աղէքսանդր վարդապետին եւ Սարգիս վարդապետին՝ աշակերտին պատրիարգի, որ յետոյ կոչեցաւ Դէտ Կեսարու: Եւ երրորդ՝ վասն խօթութեան պատահելոյ նմա: Ջի եղանակն եւ տարին ծանր էր, եւ օդն՝ ապականեալ, վասն զի համայնք խօթացեալք էին միաբանքն ի սուրբ աթոռն, եւ եւս՝ ի գիւղն: Որ եւ բազումք մեռան. յորս էր նախ՝ հայր սուրբն, եւ Թէքիրտաղցի Սարգիս վարդապետն, եւ Բաղիշեցի Չաքարիայ վարդապետն, եւ հոգետր տիրոջ մահտեսի Աւետիսն, եւ այլք ի մահտեսեաց եւ ի գիւղէն յլուլք: Իսկ այլք խօթացեալք ընդ երկար տկարութեամբ հագիւ գտան գառողջութիւն մինչեւ ի սուրբ պասեքն:

Որ եւ ի տեսանելն իմ զեկեալսն եւ զգրերն աճապարեցի, եւ դարձայ ի կրունկն Երեւան եւ հասայ Էջմիածին նոյնմբերի Դ (4): Վասն զի կամէի գնալ ի Բջնի, ի Կարենիս եւ այլ վանորայսն, բայց ի բաց թողի, որովհետեւ հրաւիրեցայ ի վեհէն եւ փութացայ ի սուրբ գահն՝ ի տեսութիւն սրբազանին:

[2]

Իսկ ի գալն ին ի սուրբ Էջմիածինն, որ էր նոյնքերի Դ (4) եւ օրն էր երկուշաբթի, գտի գվեհն ի մահճի ընկողմանեալ եւ հիւանդացեալ՝ Բ (2) ատուրբք յառաջ: Եւ հանդիպեալ նմա առժամայն սկսայ հարցանել զպատճառէ խօթութեան, եւ վասն ցաւոյն, եւ թէ՛ յոր անդամ եւ յոր կողմն ունի զխստութիւն ցաւոյն: Իսկ երանելին ասէր, եթէ՛ «Բոլոր անձն իմ ցաւի, եւ ոչ զհտեն զպատճառն եւ զուստն»:

Իսկ ես՝ տառապեալս եւ վարանեալս, սկսայ յուսադրել, եւ մխիթարել եւ սփոփել մինչեւցմասն մի զիշերոյն՝ մինչեւ երից եւ չորից անգամ ասաց, թէ՛ «Գնայ հանգստացիր: Խեղճ ես եւ ի ճանապարհէ եկեալ դադարած ես»: Իսկ ես գմտաւ ածեալ՝ «Մի գուցէ նեղացի կամ տրտմեացի սակս չգնալոյս», ելեալ գնացի ի տեղի իմ:

Եւ այսպէս շիւարեալ եւ վարանեալ կացաք զցայգ եւ զցերեկ մինչեւ ցկիրակի: Եւ ի նոյն օրն եւս շուրջ գմահճովն նստելով վարանէաք եւ ընդ միմեանս հայելով լռելեան, տրտմեալ երեսօք տարակուսէաք: Որ եւ ի նոյն զիշերն եւս մինչեւ ի Դ (4) եւ Ե (5) ժամ ի մօտն մնացեալ, եւ ապա յորդորեցին զիս փոքրաւորքն, թէ՛ «Գնա դու ի քո տեղն եւ թող որ սակաւ մի հանգչի, զի անհանգիստ լինի ի տառապիլն քո»: Եւ ես ելեալ գնացի ի մենարանն իմ: Եւ մնաց անդ որդեակն իմ՝ Յովաննէս վարդապետն, ընդ տէր Յակոբին: Եւ յետ հասարակել զիշերոյն եկեալ առ իս ասելով, թէ՛

«Ե՛լ, գնայ հոգեւոր տիրոջ մօտն, զի այլիմնապէս երեւի, եւ իրայինքն ամենայն տարակուսեալ կան»:

Որ եւ վաղվաղակի ելեալ հասի ի մօտն եւ տեսի, որ եւ ի առ եւ տուր շնչոյն էր՝ ի հոգեվարութեան: Եւ սկսայ աղաչանօք խնդրել տալ օրհնութիւնն ամենեցուն, այլե՛ արձակումն բանիւ եղելոցն, եւ պատուէր վասն սուրբ աթոռոյն եւ միաբանիցն եւ յանձնարարութիւն վասն իրայնոցն: Իսկ երանելին երբեմն բանի՛ նուազ ձայնիւ, եւ երբեմն օրհնեալ գլխովն նշանակութիւն տայր խնդրոյս:

Եւ այսպէս աջ ձեռն ի մէջ ձեռացս գոլով հեշտ եւ հանգիստ աւանդեաց գմաքոր հոգին իւր ի ձեռն հրեշտակի բարոյ այնպէս, որպէս թէ ոք հանցէ խնձոր մի ի ծոցոյն եւ տայցէ բարեկամին կամ սիրելոյն իւրոյ՝ Թ (9) կամ Ժ (10) ժամու գիշերոյ նոյեմբերի ԺԱ (11) լոյս երկուշաբթի:

Որ եւ ի լուսանալ առաւօտին ծանուցաք Երեւանայ մէլիքին՝ պարոն Յակոբջանին, որ հրաման էառ ի դքսէն Երեւանայ, որ էր տէրութար: Ալի-փաշայն տկարացեալ գոլով եւ անկեալ ի մահճի, եւ մինչ կամէին առնուլ ի նմանէ զհրաման թաղելոյն, առժամայն մեռաւ եւ փաշայն՝ առաւօտեան ճաշու ժամու: Զի հոգեւոր տէրն ի գիշերին վախճանեցաւ, եւ ի նոյն առաւօտին փաշայն եւս մեռաւ Երեւան: Վասն որոյ գեխեան ետուր հրաման, զի թաղեսցի:

Եւ ի միւս օրն ի տեղի փաշային եղին զհաճի Հիւսէին փաշայն, որ էր տեղեալ տէրէնտէցի եւ կայր Երեւան մաֆազայ՝ պահող:

Եւ եկեալ մէլիք Յակոբջանն փաշա<յա>ի չուխատարիւ

մի Էջմիածին, եւ երեքշաբթի անարժանս ժամ արարի եւ
օծի, եւ տարեալ թաղեցինք ի սուրբ Գայիանէն: Եւ ես ոչ
կարացի գնալ վասն սաստիկ ջերմանս, որում տենդէր զիս
օր ընդ մէջ, այլ յուշաթափեալ եկի եւ անկայ ի մահիճս:

Իսկ ի միւս օրն առեալ իմ զբոլոր ուխտ սուրբ աթոռոյս
գնացինք ի Գայիանէ, եւ կատարեցինք զայդն, եւ յետ այգոյն
դարձանք ի վանքն:

Եւ ի նոյն օրն կամայ ակամայ գմեզ Ե (5) –
Չ (6) վարդապետօք տանէին յԵրեւան: Որ եւ ի
ճանապարհին, յորժամ անցաք զհանգուցեալ եկեղեցին,
տեսաք զբազմութիւն արանց եւ կանանց՝ Երեւանայ
բնակողացն մեր ազգէն, որ փախստեայ գային: Յորմէ
սոսկացաք եւ հիացաք զխեղճութիւն նոցին: Եւ կամեցաք եւ
մեք դառնալ անդրէն ի վանքն, զի մի գուցէ ի գալ զօրացն
պարսից գտանիցինք ի մէջ բերդին Երեւանայ: Եւ այսպէս
աղաչելով գմէլիքն եւ զշուխատարն, որ էր մուպաշիր ի վերա
մեր, հասանք ի Փարագար: Եւ սակաւ մի նստեալ անդ եզերս
առուի միոյ հանեալ եդի ի ձեռս նորա Ե (5) ոսկի: Բազում
աղաչանօք հագի զերծաք եւ դարձաք ի վանքն:

[Է]

Իսկ ի միտում օրն, որ էր հինգշաբթի, կանուխ առեալ գնեց Ե (5) – Ջ (6) վարդապետօք եւ յակամայ կամօք քարքաշ տարան յԵրեւան: Որ եւ իմ տենդիս օրն էր, յորում գերծայ ի նոյն օրն, քանզի մութաշիրն չորեքշաբթի յերեկոյին եկեալ էր: Վասն որոյ հինգշաբթի կանուխ ելեալ գնացաք: Որ եւ զճանապարհն առոգանէի արտաստօք վասն գանազան պատճառաց:

Եւ յորժամ հասանք յԵրեւան, տարան գնեց ի դուռն քաղաքապետին եւ նախ՝ ի մօտ ռայիսին, որ էր քեխեան: Եւ սկսաւ նախ ռողքանօք յորդորել զիս, թէ՛ «Որովհետեւ վախճանեցաւ խալիֆայն, եւ դու նորա ծանօթ սիրելի ես, եւ ամենայն միաբանքն զքեզ կամին, ես ծանուցանեմ փաշային, որ դու լիցիս ի վերա նոցա խալիֆայ ի տեղի հանգուցելոյն:

Իսկ ես հրաժարեալ յայնմանէ սկսայ ասել, թէ՛ «Չեմ բաւական այդմ գործոյ եւ ոչ ունիմ կարողութիւն յամենայն կողմանց: Մանաւանդ՝ դարիպ եւ օտար եմ: Ուխտի աղագաւ եկեալ եմ այսր: Որ եւ հրաման ունիմ, գոր տուեալ են ինձ յարքունուստ, այլ եւ՝ զիր ղրզլար աղասուցն եւ ղափուճիպաշի Գուլ Ահմէտ աղայէն, որ ինձ տիրութիւն արարեալ զիս անդրէն ի վիճակն իմ դարձուձանէք: Այլ եւ՝ բազում բանս պաղատանաց, գոր մի ըստ միոջէ գրելն ձանձրութիւն է:

Բայց ոչ եղեւ հնար գերծանիլ, այլ դարձոյց գողոքականն

ի խորխտական եւ սպառնական: Եւ սկսաւ կերպիւ կերպիւ ահացուցանել զիս եւ մահու եւս սպառնացաւ: Յորում կայի շիարեալ եւ տարակուսեալ: Եւ առժամայն ոտին կացեալ գնաց մօտ փաշային: Եւ իսկոյն յետ եկեալ ասաց. «Տարեք զայդ փաշային մօտնն: Պատուէր տալով ինձ, թէ՛ «Չլինի՛ հրաժարիս, որ փաշայն զքեզ կմահացուցանէ»:

Եւ յորժամ տարան զիս յանդիման փաշային, սկսաւ եւ նա սաստկութեամբ եւ մեղադրանօք խօսիլ ընդ իս: Որ եւ նորա պատասխանեցի, թէ՛ «Մեր նախնի սովորութիւնն այն է, որ մահաար անեն Սպահան եւ Ստամպօլ, որ այն Բ (2) քաղաքացիք միաբանին եւ զմի ոմն ընտրեն եւ կացուցանեն: Ապա թէ՛ ոչ, սուրբ աթոռին եւ կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի: Որ եւ գիր ունիմք այսպէս՝ հաստատեալ բազմաց գրով եւ կնքով եւ նգովիւք փակեալ»:

Եւ այլ՝ շատ խօսք եւ գրոյց եւ թէ որչափ լացի եւ ողբացի՝ ոչ եղեւ հնար:

Այլ բարկացեալ ի վերա իմ եւ ասաց, եթէ՛ «Սպահան եւ Ստամպօլ մինչեւ երթեւեկութիւն գրերաց լինի եւ ընտրութիւն վասն ումեմն, ի մէկ տարին շլինիր: Եւ ահա երկուց կողմանց զօրք եւ պատերազմունք երեւին, եւ Էջմիածին ի վերա ճանապարհին: Մինչեւ ցայն օրն վանքն պիտի քակուի, եւ միաբանքն անգլուխ գոլով՝ մինն ոչ մնայ, այլ՝ ցրուին: Այնուիետեւ ինչ օգուտ է ձեր ընտրութիւնն: Գնա՛, ահա հրամայեցի քեզ, եւ յանձն առ: Եւ ըստ օրինաց ձերոց կատարեսցեն զկարգ կաթողիկոսութեան ի վերա քո, եւ կատարեալ զայն թէքքէն: Չի ոչ միայն ձերն է, այլ մեր թագաւորին է, եւ մեզ ասպնջատեղ եւ պիտանացու: Եւ ես

մարդ առաքեմ հանդերձ գրերով, արգիլամով եւ տամ բերել գիրաման ի յարքունուստ վասն քո»:

Եւ այսպէս քարշեցին զիս արտաքս եւ գրեցին զպոյրույթի մի, թէ՛ «Դուք՝ միաբանք Էջմիածնայ, որովհետեւ ընտրեցիք եւ կամեցաք զդա լինել ձեզ գլուխ, ահա հրամայեցի նստի դա խալիֆայ ձեզ: Եւ դուք, զոր օրէնք եւ արարողութիւնք՝ կատարեցէք եւ հնազանդ լերուք, որպէս յառաջնոցն: Եւ զայլ հարկաւոր բանսն ի յարքունուստ եւս հոգամ, ձեզ հոգ չլինի»:

Եւ առեալ զիս տարան ի տուն մէլիք Յակոբջանին, եւ Գ (3) օր մնացեալ ի տուն մէլիքին: Եւ ապա ժողովեալ զքէտխուտայքն Քանաքէռու, գերեւանայ եւ այլոց տեղեաց, այլ եւ, զառաջնորդս վանորէից յԷջմիածին: Եւ անտի եւս գրեցին Կարբի, յԱշտարակ եւ այլ տեղիս՝ զալ իշխանաց եւ քէտխուտէից, որ եւ եկեալ ժողովեցան ի սուրբ Էջմիածին մնացեալ վանորէից առաջնորդքն:

Եւ նոյեմբերի ԻԴ (24) յիսնակաց կիրակին օծին զանարժանս կաթողիկոս եւ եղին ի ծառայութիւն եւ ի ներքոյ լծոյ սուրբ Էջմիածնի աթոռոյն մեծի սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որ էր թուին մեր ՌՃՁԳ (1734):

[Ը]

Յետ այսորիկ սկսայ մտախոհ լինիլ եւ յամենայն գորութենէ ջանալ եւ արիանալ վասն մեծի գործոյն եւ կառավարութեան սուրբ աթոռոյն մեծի. եւ զի անծանօթ գոլով իմ երկրի, եւ մարդկանց, եւ միաբանից, եւ ամենայն ելից եւ մտից եւ արարողութեան եւ վասն պակասութեան փողից, որս ոչ գոյր ամենեւին: Իսկ վանից ծախքն՝ բազում եւ անթիւ:

Յոյժ վշտանայի, տառապէի, բայց ողորմածն Աստուած խնամէր եւ ստածէր. երբեմն ի հողոյ արդեանց վաճառելով եւ երբեմն ողորմութիւն ի եկողաց օգնութիւն հասանելով եւ երբեմն փոխ առնելով: Մինչ զի ԻՌ- (20000) դուռուշ մինչեւ ցայսօր պարտք արարեալ եմ:

Եւ այսպէս տանջանօք եւ խղճութեամբ կառավարեցի գտորբ աթոռն:

Յորում ժամանակի պաշարեալ կայր Կենճէն ի պարսից: Եհաս եւ Քեօփրլու օղլուն ի Յամթայ բազում գօրօք ի Պայագիդ եւ անտի ի Ղարս՝ ձմեռելով: Եւ ԺՌ- (10000) սօմար ցորեան Թէմիր փաշային հրաման արարեալ՝ որ տարաւ հասոյց ի Թիֆլիզ եւ եկն դարձեալ ի Ղարս: Նոյնպէս եւ Ղարսայ՝ բազում պատրաստութիւն ցորենոյ, եւ գարոյ եւ այլոց իրաց: Եւ պատերազմողական անօթից յղեաց յԵրեւան:

[Թ]

Եւ յորժամ Էանց դառնութիւն օդոյն ձմեռայնոյ, եւ կակղացաւ սակաւ մի եղանակն եւ մտաք ի թուականն ՌՃՁԴ (1735), եւ ապրիլ ամսոյն չուեաց խաղաց Թահմազ[ղուլի] խանն ի վերա Ղարսայ քաղաքին՝ կողմանքն Ղազախու եւ Լօռու՝ մինչեւ սպառեալ էր ձիւնն ի լեռնային կողմանցն յայնցանէ: Քանզի լուաք ի գորաց պարսից եւ մերձակայից Խանին, թէ գծործոր մի յորում կամէին անցանել եւ շրջիլ ի վերա Ղարսայ, սուսերօք իրեանց պեղեցին, հատին եւ ճանապարհորդեցին անցանել: Որ եւ ի գիշերին այնմիկ կրկին ձիւն եկեալ ելից զճանապարհն, յորում աշխատեալ էին աուրս Բ (2): Եւ ապա այնուիետեւ ընդ այլ ճանապարհ անց գտեալ բազում դժուարութեամբ հասին ի սահմանս Ղարսայ:

Որ եւ ելեալ ընդդէմ միմեանց զմի օր պատերազմեցան ընդ իրեարս: Եւ երկուց կողմանց անկան մեռեալք եւ վիրատրեալք՝ իբրու Չ (6) – Է (7) հարիւրից: Բայց կողմն հագարացոց ի փախուստ դարձան: Եւ Խանն դարձաւ ի բանակտեղն իւր՝ ի տեղի անուանեալ Եախնի թէփէ: Եւս վասն ոչ գոլոյ խորակ բաւական գորացն եւ գրաստուցն դարձաւ հանճարեղն եւ երկրորդ Աղեկսանդրն ի յԱյրարատ՝ Պաշ Ապարանովն գալ յԵրեւան եւ յԷջմիածին:

[Ժ]

Արդ ի դառնալն Ղարսայ մեծի Խանին եւ ծանր-ծանր գալ ի կողմանս Արարատու եկեալ եհաս ի յԱպարան՝ ի Շիրադալայ կոչեալ տեղի: Եւ գորքն սփռեցան մինչ ի Կարբի, եւ Աշտարակ եւ յՈւշական: Եւ յուշ արարին ինձ իշխանքն մեր, որք կային ի բանակին, եւ Մէլիքջան քալանթարն, թէ՛ «Հարկ է գալ քեզ ի տեսութիւն Խանին ընծայիւք եւ պատրաստութեամբ»: Որ եւ ելեալ անյապաղ Ե (5) – Ջ (6) վարդապետօք եւ նուիրօք ըստ կարողութեան մայիսի ԻԷ (27) որ էր հոգեգալստեան երրորդ օրն երեքշաբթի, եւ հասայ ի նոյն օրն ի Յոհանավանքն: Եւ չորեքշաբթի գնացինք ի յԱպարան՝ ի կողմն Շիրադալայ կոչեցեալ տեղոյն մերձ: Որ եւ ազդեցին Խանին վասն մեր, եւ ետուր հրաման նասաղչի պաշուն՝ Ապդուլ-հասան բեկին, ղօճաղ առնուլ զմեզ: Եւ գնացեալ առ նա հանգեաք գայն գիշերն:

Իսկ լոյս հինգշաբթի վաղ քաջ ընդ առօտն, մինչ կամէր լուել, տարան զիս ի դէմ իւր ընծայիւք: Եւ գնացեալ իմ բարեւեցի եւ շնորհատրեցի զգալուստ իւր: Որ եւ ինքն եւս ասաց. «Խօշ կէլտին Խալիֆայ նիճէ սէն: Չաղ սէն: Տէ արթան Խալիֆայ կէտէք իլէրի»: Եւ առժամայն ձիատրեալ ինքն գնաց գօրօքն իւրովք եւ բանակն՝ զկնի: Եւ ետուր ինձ զհնուորս իւր սպասատրացն, որ անկեալ առաջի իմ տարան եւ զիս զկնի իւր:

[ԺԱ]

Եւ յորժամ հասանք ի տեղի բանակին, եւ իջաւ ի վրանն իւր, խնդիր արար ինձ: Եւ փութացան խնդրակքն մինն զհետ միոյ՝ շեշտի եւ ստիպով: Քանզի այսպէս սովորութիւն ունին զամենայն գործս իրեանց ծառայական շտապով եւ շուտափոյթութեամբ կատարել: Եւ առժամայն փութացուցին զիս եւ հասուցին ի վրանն խանին որ եւ հրաւիրեալ զիս ի ճաշ ի սեղան իւր: Եւ այսպէս զաւուրս երիս ընդ իւր ունելով ի բանակին, մինչեւ եկեալ հասանք ի Դողս գիւղն:

Եւ ապա հրաման ետ ինձ գնալ յԷջմիածին: Յորմէ վստահացեալ հրաւիրեցի եւ եւս գնա գալ ի վանքն՝ թամաշայ եւ զհարաթ: Եւ խոստացաւ գալ: Որ եւ շաբաթ օր մայիսի ԼԱ (31) եկեալ բանակեցաւ մերձ քանքանին՝ եզերս գեղին, ի հանտն: Որ եւ զգորեանն եւ զգարին իսպառ կերցուցին երիվարացն եւ արաթուր կոխեցին: Ջի ժամանակ էր հնձոց, եւ չեւ եւս էր հնձեալ, եւ իսպառ հատուցին ի դաշտէ անտի:

Իսկ ես ակն ունէի, թէ՛ ինձ խապար լինի ի նմանէ, եւ կիրակի ոչ գնացի: Բայց երկուշաբթի առաքեցի զաթոռակալ Աղէկսանդր վարդապետն ի բանակն որ զրոյց բերցէ զորպէս կամիլն իրեանց: Եւ իսկոյն դարձաւ առ իս աթոռակալն տրտմեալ երեսօք եւ թախսանձեալ լքեալ սրտի՛ որպէս կիսամեռ: Որ եւ ի տեսանելն իմ գնա այնպէս տխուր եւ իմացեալ զպատճառն՝ որ բարկացեալ էր խանն, թէ՛ «Վասն էր ոչ եկին առաջի իմ, յորժամ եկի ի յօթեւանս եւ անտի

առեալ տանէր զիս Էջմիածին»:

Արդ ես ոչ գիտացի, եւ այլք՝ քան զիս անբանացեալք, ոչ ուսուցին զիս զժէսս պարսից եւ գտովորութիւնն երկրին:

Վասն որոյ ահիւ պակեայ եւ ի կենցաղս յուսահատեցայ: Եւ սկսայ այնուհետեւ գլետին եւ զհրաժարական գողջոյնն տալ եւ ներումն եւ զաղօթս խնդրել ամենեցունց: Եւ մտեալ ի սուրբ տաճարն անկեալ առաջի սուրբ իջման տեղոյն լալով, հառաչանօք եւ դառն արտասուօք յանձնելով զհոգի իմ յԱստուծոյ, եւ այսպէս պաշարեալ երկիւղիւ եւ լքեալ սրտիւ գնացի ի բանակն կիսամեռ:

Եւ մինչ ակն ունէի տանջանաց եւ մահու եհարց Խանն, թէ՛ «Խալիֆայ նիշին օ չաղ քի կելտրմ սան կելմատրն դարշուլամաղայ պիզի, ինտի քի նե չուն թաքիֆ էյլատուն Ուշքիլիսայէ»:

Իսկ ես լալով եւ դողալով պատասխանեցի. «Խանըմ, պէն Ուռումտէն գելմիշէմ, քի մալում տոր, պու էրն էտէթին պիլմէմ: Քիմսանն սուշի եօքտոր, սուշ պէնումտոր: Օլտորսան պէնի օլտոր»:

Քանզի բարկացեալ էր ի վերա միրզայ Մեհթուն, թէ «Վասն էր ոչ ազդեցեր Խալիֆային զի նա օտար երկրէ է եւ ոչ գիտէ: Եւ առժամայն ողորմածն Աստուած յեղաշրջեաց զսիրտն ի քաղցրութիւն: Եւ խանդաղատեցաւ նշդեհութեանս իմում եւ ասաց. «Ճշմարիտ է խօսքն Խալիֆային եւ ոչ գիտէ զորպիսութիւն երկրին: Բայց մեզ պարտ է Խալիֆային խիլաթ տալ»:

Եւ զի առաջի նուագին՝ որ գնացի ի տես, շնորհեալ էր ինձ

զկաթողիկոսութեան ռախամն եւ այլ Գ (3) ռախամ եւս: Որ էր մինն վասն աւանդիցն, զոր շահի եկած տարին գայնոսիկ, զոր քշեց շահն եւ տարաւ ընդ իր, տուեալ էին ի պահեստ սուրբ Էջմիածնայ եւ այլոց վանորէից եւ գիւղորէից: Եւ յետոյ լուեալ օսմանցօցն յափշտակեցին գայն: Մի կարասցեն յետս պահանջել:

Եւ երկրորդ. զի թուրքացողքն ի հայրենեացն զրկեցին:

Իսկ երրորդն. մի ոք գայցէ ի վանքս եւ նեղացուցէ առանց հրամանաց Խանին:

Եւ առժամայն հրամայեաց Խանն, եւ բերին զխիլայն եւ արկին ի վերա իմ, որ էր քէթիպի զարպաֆ սամուր գրապանաւ:

Եւ այսպէս, մինչ մահու սպասէի, խիլայեաց զիս:

Եւ ով ոք ոչ զարմասցի: Փա՛ռք Աստուծոյ հրաշագործութեանն: Մեծ են գործք քո Տէր եւ յոյժ խոր են խորհուրդք քո:

Վասն որոյ համարձակութիւն գտեալ ասացի: «Խանըմ, եթէ հրաման տաս, գնամ բերեմ զմիաբանքն ուխտին մեր զինաթով, եւ անկեալ առաջի խանիս տարցուր զհրամանքդ ի վանքն»: Եւ ասաց. «Բարի է: Այդպէս արարէք»: Եւ առժամայն դարձայ ի վանքն:

Եւ մինչ ակն ունէին ի դագաղի տեսանել զիս, տեսին կենդանի եւ խիլայեալ:

Որով զարմացեալ եւ հիացեալ փառս ետուն Աստուծոյ բոլոր միաբանքն:

Եւ ուրախացեալ ամենեցուն տօն մեծ կատարեցին:

Եւ վաղվաղակի գգեստաւորեցայ: Եւ միաբանքն ամենայն շորջառով, եւ մանկունքն շապկով, եւ խաչալամով, իղաբերից մոմերով, թափօրական պատրաստութեամբ գնացեալ առ նա եւ առեալ մեծաւ փառօք բերաք ի սուրբ աթոռն:

Եւ մտեալ ի սուրբ տաճարն առաջի սուրբ իջման տեղոյն կանգնեցաւ եւ եհարց, թէ՛ «Զի՞նչ տեղ է, եւ վասն է՞ր՝ կաթողիկէս»: Նոյնպէս եւ՝ վասն պատկերացն, եւ վասն մեծ կաթողիկէին, եւ շինմանն եւ շինողացն: Եւ ըստ պատշաճի տուաք զպատասխանին:

Եւ եղեալ առաջի աւագ խորանին աթոռ եւ խալիչայ եւ հրաւիրեցի անդ նստիլ: Որ եւ նստաւ վաղվաղակի եւ հրամայեաց ժամ ասել: Եւ ասացաք գերեկոյեան ժամն, զի էր ի տօնի սրբոց Հոհիսիմեանց եւ օրն երկուշաբթի: Եւ ինքն նստեալ հայէր եւ ուրախանայր: Եւ առժամայն զիս յորդորեալ ծերագոյնքն ի միաբանից կանգնեցուցին ի կաթողիկոսարանի գգեստով իմով:

Եւ յետ ասելոյն գերեկոյան ժամն կրկին յորդորեցին զիս ծերագոյնքն, թէ՛ «Ծանուցումն եւ շնորհակալութիւն արա՛ եւ օրհնեայ», որպէս եւ արարի իսկ: Եւ վասն զի այլազգեաց լեզուով խնդրեաց Խանն, եւ ես այնպէս խօսեցայ առաջի իւր:

Յորմէ ուրախացեալ եւ յետ արձակմանն ելեալ արտաքս եկեղեցոյն, եւ ետուր ձեռամբ միրզին իւրոյ ԳՃ (300) փլօրի ողորմութիւն եւ գնաց: Գնացի եւ ես մինչ ի միջի դուռն, եւ յետս դարձոյց զիս: Եւ ինքն գնաց ի բանակն:

[ԺԲ]

Եւ ի նոյն գիշերի, մինչ շեւ էր լուսացեալ, արձակեաց եւ գոռիքն իւր, որք եկին եւ նոքա ի տեսութիւն սուրբ իջնան տեղոյն: Եկաւ եւ ինքն կրկին անգամ ի լուսանալն: Եւ ուրախացեալ ի մէջ տաճարին գուարճացոյց գիրայինքն՝ պատմելով նոցա զամենայն , գոր լուեալ էր: Եւ վայելեալ զշարպաթներն, եւ զԺխանելիքն, եւ զկուլապն եւ զայլ պատրաստութիւնս քաղցրեղինաց եւ ընթակայից, եւ ապա ելեալ արտաքս ի վանից մեծ դարվագէն՝ առաջի գերեզմանացն, եւ իսկոյն կոչել ետուր զիս առաջի իւր:

Եւ շնորհակալեցաւ եւ մխիթարեաց ասելով. «Մի հոգար, եւ մի տրտմիր եւ բնաւ մի երկնչիր: Այս օճաղս մեր է, եւ դու մէկ եախշի ծեր մարդ ես: Տունդ աւատան լինի, (իբրու ասել է, թէ՛ տունդ շէն լինի): Կացիր բարով: Եւ թէպէտ զանդս ձեր եւ զբարիս գերիվարաց եւ զօրաց ինոց կերցուցի, բայց զփոխարէնն ձեզ հատուցանելոց եմ ի ժամանակին»:

Եւ մտրակեալ գերիվարն գնաց խաղաղութեամբ եւ սիրով զճանապարհն իւր՝ ի վերա Փարագարու եւ անդ բանակեցաւ:

Եւ ես ի նոյն օրն զկնի իւր գնացի ի բանակն ի Փարագար սակաւ ընծայիւք: Եւ կրկին յուսադրեաց եւ դարձոյց զիս ի վանքն, եւ ինքն գնաց ի վերա Երեւանայ ի Եղեւարդոյ կողմն:

Եւ օսմանցիք ելեալ Երեւանու բերդէն դիպան իրար սակաւ մի եւ դարձան կրկին ի բերդն: Որ եւ սպանին ի

թուրքաց Է (7) այր, եւ Բ (2) կենդանի ընթռնեալ տարան ընդ ինքեանս եւ գնացեալ բանակեցան մերձ Եղեւարդոյ ի վերա բլրի մի օրն հինգշաբթի, որ էր յունիսի Ե (5): Բայց, մինչ Փարագարն էր, ի նոյն գիշեր բերին զրոյց առ նա, եթէ՝ «Օսմանցոց սարասկար Ապտուլահ փաշայն էանց զգետն Ախտուր[ե]ան բազում զօրօք եւ գայ ի վերա քո: Պատրաստ լեր ի պատերազմիլ, զի բանիւ եւ փախչելով պատերազմ ոչ վճարիե: Իսկ մեծախելք Խանն խիլայեաց զեկողն եւ ասաց. «Գոհութիւն Աստուծոյ. զի եւ ես ի բազում ժամանակաց՝ ի հեռուն հետէ, զայն խնդրէի»:

[ԺԳ]

Եւ սկսաւ այնուիւնտեւ տեսանել զպատրաստութիւն իւր վասն պատերազմի: Եւ զատոյց զամենայն ծանրագոյն կա[րա]սին այսինքն՝ զնեծամեծ վրանսն, զգերիսն, եւ զայլ անօգուտ չպատերազմողն եւ զուիսն. ընդ Գեղամայ ծովուն եգերովն խաղացոյց զնալ ի Թարվէզ:

Եւ ինքն մնաց արիական պատերազմողօք ԺԸ (18) հազարաւ, եւ ընտրեաց իւր տեղի բանակի եւ վրանի զբլուր մի բարձաւանդակ, որ ի հնուց անուանեալ էր Ախի Թէփէսի: Եւ անդ հարեալ զվրանն ամրացոյց զբլուրն բլրի այն քարէ կարկառի, իբրեւ զբրքունս՝ կիսագունդ, ի չափ Բ (2) զագի զբարձրութիւնն՝ իբր զպատնէշ, զոր այլագգիքն մաթարիզ անուանէն: Որ թէ յանկարծակի զայցեն օսմանցիքն ի վերա սոցա, անտի կարիցեն պատերազմիլ ընդ նոսա հրահանելեօք, կամ՝ այլովք պատերազմական զինուր: Եւ այսպէս զբլուր բլրին երիցս եւ չորիցս շրջապատեաց:

Եւ ի շաբաթ օրն եհաս եւ Քօբրլու օղին զօրօք իւրովք: Ի յԱպարանու վերի կողմէն էջ ի ստորտն Արայի լերան՝ յանդիման Եղուարդու: Եւ ելեալ չարխաճիքն ընդդէմ միմեանց դիպան եւ՝ անկեալ երկուց կողմանց սակաւ դիակունք, ի բաց կացին ի միմեանց:

Իսկ զգիշերն ամենայն աշխատեցան պարսիկքն վասն ջրոյն պակասութեանն: Եւ զոր ինչ ոչխար եւ այծ ունէին՝ զենին եւ զտիկս հանեալ ջրով լցրին: Նոյնպէս եւ զայլ ջրի

ամանսն լցուցեալ պատրաստեցին ի բլրին, զի հեռի էր գետն
Ջանկի, իբրեւ ձիու արշաւանս Բ (2)՝ յետուստ կողմանէ, եւ
առաջի նոցա՝ զօրքն թուրքաց:

[ԺԴ]

Մեծ են գործք Աստուծոյ, եւ յոյժ խոր են խորհուրդք ամենակալին: Եւ ո՞վ է այն ի հողեղինաց որ կարիցէ քննել կամ վերահասու լինել: Սքանչանամ այժմ, եւ հիացումն ունի գմիտս ին: Բաբէ՛ հրաշիցն Աստուծոյ եւ արդար իրաւանցն Արարչին:

Ջի այնմ վայրի եւ ի նոյն տեղի, որում ԺԵ (15) ամաւ յառաջ Գ (3) գօրագլուխ 3 (300) արամբքն գԺԲՌ (12000) պարսիկս կոտորեցին, եւ արեան ճապաղի դիաթաւալ ընդ երեսս դաշտին զգէշս սարդկան արկին կերակուր լինել գազանոց եւ թռչնոց, նոյնգունակ գտրիտուրն փոխարինաց հատոյց ամենակարողն:

Ջի յետ շաբաթուն յաուրն կիրակէի, որ էր Ը (8) ամսոյն յունիսի, ի յերկրորդ ժամէ աուրն սկսան պատերագմիլ:

Իսկ մեծ Խանն եւ արին Թահմագղուլի, մինչ պատերագմէին, զգօրս իւր սակաւ ցուցեալ, որպէս թէ երիս գունդս հազարական թուով, մինչ զի առ ոչ ինչ համարեալ օսմանցոցն գօրս պարսից վասն սակաւութեան՝ իսկոյն հրամայեցին բանակին իրեանց բառնալ զկարասին եւ ենկիշարիք հետեւակ՝ առաջի, եւ թօփերն՝ զկնի:

Որպէս ասի յոմանց, թէ Կ (60) թօփ ունէին օսմանցոց, որ եւ ես տեսի զքառասունս:

Եւ զկնի թօփերաց հեծեալքն, եւ ի միջի իրեանց՝ սէրասբէր Ապտուլահ փաշեն, եւ Սարու Մուստաֆայ

վաշայն, եւ Թւնորն, եւ Փօլատն այլեւ՝ Քոռ շաւուշն, որ եւ պարծեցեալ էր ի նոյն գիշերին, եթե՝ «Ի՛նչ պիտի լինին պարսիկքն, զի առ ոտս հեծելագորացն իմոց տամ առաքոր կոխել գնոսա»:

Իսկ ի խմբել պատերազմին՝ որովհետեւ վասն սակաւութեան պարսից զօրաց պատրեցան օսմանցիքն, եւ հեռացան ի ստորոտէ լեառնն Արայի եւ դիմեցին ի վերա պարսից զօրացն, եւ սոցա խոյս տուեալ սակաւ սակաւ հեռացուցին ի լեռնոտէ անտի եւ ածին մինչեւ Եղւարդայ դաշտն: Ապա ելեալ ի ձորոց ի կողմանցն Երեւանու զօրք պարսից, որպէս ասեն թուօք ԺԸՌ- (18000) աց, եւ թէպէտ այնքան էին եւ գունդ գունդ կազմեալք, բայց հայէին ի հեռաստանէ եւ ոչ պատերազմէին, զի ոչ ունէին հրաման ի Խանէն, այլ միայն՝ Գ (3) գունդն՝ հազարական արամբ: Այն՝ որ կարգեաց Խանն, նոքա պատերազմէին:

Իսկ Խանն ըստ արիական սովորութեանն իւրոյ կազմէր, յօրինէր, կարգէր, յորդորէր եւ զիր հրահանելիքն յաջմէ, եւ յահեկէ եւ ի մէջտեղաց տեղաւորէր: Նոյնպէս եւ՝ զամպարական, որք են մեծամեծ թֆանկներ՝ ամէն ըղտի վերա մի հատ ի ճակատ սամարին, որ է ի վերա ողին ըղտոյ թուով՝ ԷՃ (700): Եւ այսպէս նախ՝ զմեծ թօփերն ետուր ձգել, եւ ապա՝ զամպարական:

Եւ խմբեցան ընդ միմեանս ճակատ առ ճակատ: Եւ ընդ թֆանկսն զմիմեանս յաղթահարէին հետեւակք ի յերկուց կողմանցն յունիսի Ը (8) օրն կիրակի: Սկսեալ ի երրորդ ժամէ ատուրն մինչեւ ցիինգերորդ ժամն հրօք եւ հրահանելեօք

պատերազմեցան: Օսմանցիքն Բ (2) կամ Գ (3) թօփ միայն կարացին ձգել, իսկ պարսից կողմն՝ թուի, թէ Յ (300) եւ այլ աւելի թօփ ձգեցին, եւ զամպարակներն՝ զամենայն եւ ձեռաց թֆանկներն՝ բազում:

Եւ յանկարծակի Խանն հասաւ ի թօփխանային օսմանցոց եւ տիրեաց: Եւ յորժամ տեսին եւ լուան գտիրելն թօփխանային, առժամայն ի փախուստ դարձան օսմանցիքն, եւ եւ պարսիկքն՝ զկնի կոտորելով: Կոտորելով հասուցին զմի ծայրն ի վերի կողմն Արայի լեառն՝ հանդէպ Սաղմոսավանից եւ զվարի ծայրն գօրաց՝ ի կողմն Աշտարակու, եւ ի միջի եղեալսն՝ ղէմ ածին Քարսահ գետոյն ղիմաց Յոհանավանից եւ Կարբու եւ Մօղնու: Որ եւ թուի, թէ բազումք էին գահավիժեալքն ի ձորն Քարսահ գետոյն, քան թէ սրով սպանեալքն:

Որ եւ գօրավարն նոցա զՔեօբրլու օղին, ի նեղ արկին: Եւ մինչ կամէր իջանել ի քարափէն ի ձորն նեղ եւ ղժար քարոտ ճանապարհաւ մի ոչ ժուժեաց ի վերա ձիոյն, այլ անկաւ ի ձիոյն ի վերա քարանց, եւ կարի վիրաւորեցաւ գլուխն եւ մերձ էր ի մեռանիլ: Վասն որոյ գլխատեաց զնա անարգ պարսիկ մի եւ եբեր զգլուխն առաջի Խանին: Եւ յորժամ տեղեկացաւ Խանն ի կենդանի կալանաւորաց օսմանցոց, թէ ճշմարիտ սէրասքէր Ապտուլահ փաշային գլուխն է, իսկոյն խիլաեաց զբերողն գլխոյն եւ խոստացաւ այլ եւս խիլայս, զի թէ եւ զմարմինն բերցէ: Որ եւ իսկոյն գնացեալ գտին եւ բերին եւ ետ տանել ի Կարբի: Եւ ղիագարդեալ եղին ի դագաղն, եւ հասուցին ի Ղարս եւ անդ թաղեցին:

Այլ եւ, գտամաթ Մուստաֆայ փաշայն եւս սպանին ի պատերազմին: Եւ գնա ետ գտանել եւ դիագարդեալ յդեաց ի յԵրեւան, որ անդ թաղեցին ի մէջ նոր ջամուն:

Եւ այլ Բ (2) թուողով փաշայք կային. մէկն՝ առնաւուտ եւ միւսն՝ պօշնախ, զոր անկան եւ նոքա ի պատերազմին, որպէս պատմեցին մեզ:

Եւ այսպէս մեծ կոտորած առնելով հասուցին զմի ծայրն վերի կողմամբն ի Ախուր[ե]ան գետոյ, որ է Արփաշային: Եւ զմի ծայրն վայրի կողմամբն ստորոտով լերինն Արագածու՝ կրկին մինչեւ ի նոյն գետն:

Որ եւ յետ կոտորածին հանդէս արար եւ ետ ի թիւ արկանել զսպանեալսն: Եւ գտին ԽՌ (40000) դի ի յօսմանցոց: Իսկ ի պարսից թուի, թէ ԺԵ (15) կամ Ի (20) մարդ չպակասեցաւ, զի հիացումն էր կարկամիլն եւ կապիլն օսմանցոց առաջի պարսից: Որք եւ ձեռք անգամ ոչ կարէին վերացուցանել, որպէս թէ կապեալ էին առաջի սպանողաց:

[ԺԵ]

Իսկ յետ երից ատուրց օրն երեքշաբթի գնացի ես՝ տրուպ Աբրահամ հոգեւոր տէրս ի տեսութիւն Խանին ի կողմն Եղարդու մերձ բլրոյն Մուրատ թեփէսի անուանելոյ: Եւ ի ճանապարհին հանդիպեցայ դիականցն՝ սկսեալ ի Աշտարակոյ հանդէն մինչեւ ցԵղարդ՝ անթիւ բազմութեան սպանելոցն: Եւ դեռեւս կային ոմանք կենդանի, որ եւ խուզէին պարսիկք: Չայնպիսիսն եւս սպանէին: Որպէս եւ տեսայ աշօք ինովք, մինչ գնայի ի ճանապարհին:

Որ եւ վերա հասայ հայու մի կիսամեռի, մինչ կամէին մահացուցանել, եւ թափեցի ի ձեռաց նոցա: Եւ զիմ շաթիր Պօղոսն ի հետն եղի բառնալով ի վերա գրաստու եւ ետու տանել ի յԱշտարակ ի խուցն եկեղեցոյն: Եւ պատուիրեցի, զի քահանայք հոգ տարեալ խնամք տարցեն: Որ եւ գտեալ գառողջութիւն եւ կատէպան մտեալ, որ է այգէպահող, եւ անդ ումեմն մնաց անդանօր:

Այլ եւ բազում վիրատրեալք, որք գերծան ի պատերազմէն, եկին երկրորդ օրն ի յԷջմիածին՝ թուրք, հայ, հոռոմ, առնաւուտ: Եւ բազմաց դեղ առնել ետու: Եւ գիշերով գտաճկունսն յուղոյ եղինք Երեւան: Եւ այլ ի մերայնոց եւ յունաց՝ ոմանք մեռան, եւ ոմանք առողջացեալ գնացին ուր եւ կամեցան:

[ԺՉ]

Եւ ապա այնուհետեւ հետեւեցաւ Խանն ելանել ի գագաթս լեռանց ի կողմն Ղրխապուլախու՝ մերձ Գեղարդայ եւ Գօրատարայի: Որ եւ սփռեալ տարածեցան գօրք քանակին մինչեւ Ծաղկունաձորն եւ մինչեւ եզրն Գեղամայ ծովուն: Որ եւ մնաց ի գբօսանս մինչեւ ցյուլիսի վերջն: Եւ օգոստոսի սկիզբն սկսաւ ի լեռնեն նոյն ճանապարհաւ, ընդ որ գնաց, եւ եկեալ եհաս մերձ ի տեղի պատերագմին՝ ի բլուրն Մուպարաք թէփէսի ասացեալ: Չի սկիզբն բլրիս անունն Ախի թէփէսի էր, իսկ ի պատերագմին՝ որովհետեւ յաղթեաց Մուպարաք, թափայ կոչեցաւ, եւ մնաց անունն այսպէս:

Եւ յորժամ եկն մեծաբաղդ Խանս մերձ այսմ բլրիս, էի եւ ես ընդ նմա, քանզի խնդրեալ էր զիս: Եւ յառաւօտուն, երբ կամէր չուել, եւ ի բլուրն այն. կոչեաց եւ զիս ընդ մեծամեծս՝ խաներօք եւ միրգօք հանդերձ, գքեալանթարն եւ գմէլիքն եւս, ի գագաթ բլրին՝ ի տեղին, որում հարեալ էր զվրանն իւր յաւուր պատերագմի, յորում գյաղթութիւն արար:

Եւ շատ երկար խօսեցաւ ընդ մեզ: Նախ՝ վասն գմբեթին, որում հրամայեաց շինել օրինակ վրանին իւրոյ, զի մնացել յիշատակ եւ յիշեսցի ապագայիցն: Եւ երկրորդ՝ խօսեցաւ պատրաստելոյ վասն գմեզ եւ պահպանելոյ ի նենգութենէ հագարացոց՝ մերձասահման գոլոյն մեզ սահմանացն նոցին:

Եւ այսպէս ժամ մի խօսելով ընդ մեզ երբեմն ընդ

խաներացն եւ մերթ՝ ընդ իս, մինչեւ իջաք ի բլրոյն ի դաշտն: Եւ ապա հրամայեաց մեզ ձիաորիլ եւ գնալ զկնի նորա: Եւ այնմ գիշերի օթագայեցաւ ի Պաշ Ապարան անուանեալ տեղին: Եւ երեկոյան հացին հրաւիրեաց զիս ի սեղանն:

Եւ առաւօտոուն դարձոյց զՊապա խանն, եւ զՍէրտար խանն, եւ զԵրեւանայ խանն եւ զՆախշուանայ խանն իրեանց տեղիս: Որում պաշարեալ էին զԵրեւան. այս չորեքեան խաներս կրկին պաշարեալ ի Դ (4) դիմաց պահեսցեն, որ ոչ կարիցեն մուտ եւ ել առնել:

Իսկ զիս տարաւ ընդ իւր մինչեւ ցՃինլի գօլ կոչեցեալ վայրն եւ կրկին հրաւիրեաց զիս ի սեղանն: Եւ զի էր պահք փոխման սուրբ Աստուածածնին, վասն որոյ համարձակեալ ասացի «Խա՛նքն, այս Ե (5) – Չ (6) անգամ է, յորմէ հրաւիրես զիս ի սեղան քո: Եւ յամենայն ժամ պահոց օր պատահեցաւ: Եւ ես կարօտ մնացի ի քո քաղցր կերակրոցդ յորմէ թուի ինձ, որպէս գմանանայն իջեալ ի բարձանց: Վասն որոյ խնդրեմ ի մեծութենէդ, զի հրաման տայցես տուածիյիդ քո, որ իմ առաջելի կերակուրն տանիմ ընդ իս իմ օթեւանն: Յորմէ ծիծաղեցաւ ուրախութեամբ եւ ասաց. «Խալիֆա՛յ, ապա վաղն կուտե՞» Ասի. «Ոչ»: Որով խանդադատեցաւ եւ ասաց. «Բարի է: Վաղիւն այլ եկ ընդ իս: Եւ կրկին հրաւիրեալ ես յիմ սեղանն, քանզի եւ ես զհաց քո շատ եմ կերեալ: Եւ ապա արձակեցից գնալ Ուշքիլիսէն»:

Եւ վասն այսմ պատճառի գնացի ընդ նմա եւ գմիս օրն: Եւ այնմ երեկոյին եւս հրաւիրեաց ի սեղանն կրկին եւ ետ լցուցանել իւր առաջի եղեալ փլաւէն աման մի: Եւ

հրամայեաց սպասաւորացն պահել զայն եւ հասուցանել ի վրանն իմ, որպէս եւ արարին իսկ:

Եւ յետ ուտելոյն մեր, իւրեանք՝ ի յուտեաց կերակրոցն եւ ես՝ ի մեղրէն եւ այլոց քաղցրեղինաց, աւարտեցաւ հացկերոյթն: Եւ լուացեալ զձեռն նոյնպէս եւ մեք յարուցեալ ես ի վերա ոտից շնորհակալեցայ եւ կանգնեցայ: Որ եւ ասաց. «Խալիֆայ, մուրախասս արարի զքեզ: Գնայ բարով ի քո մանաստորն եւ աղօթեայ վասն մեր»:

Իսկ ես պաղատելով խնդրեցի զնալ ընդ նմա մինչեւ ցԱրփաշայն: Բայց երկրորդ Աղէկսանդրն ոչ կամեցաւ բնաւ եւ ոչ ետ թոյլ, այլ զայս ասաց, թէ՛ «Ըխտիար ես, խեղճ ես, ափսոս ես: Դարձիր, դարձիր ի տեղի քո եւ տուայ արա մեզ»:

[ԺԷ]

Եւ կանուխ վաղ քաջ դարձանք ի բանակէն: Եւ եկինք յԷջմիածին օրն շաբաթ նաւակատեաց սուրբ Աստուածածնին: Եւ ի գիշերի հասանք ի սուրբ գահն: Իսկ առաւօտն յետ պատարագին ի սեղանն վայելեցինք զկերակուրն, գոր շնորհեաց Խանն, ընպելով զբաժակն յանուն նորա:

Եւ ապա փութացուցաք զգործաւորս ամարաթին, գոր պատուիրեաց Խանն շինել ի գլուխ բլրին ի տեղի վրանին իւրոյ: Եւ յանձնեաց ինձ եւ մէլիք Մկրտումին, զի վերակացու լիցուք, եւ մեր գիտութեամբն ծախսն լիցի: Եւ կամ՝ ի կողմանէ իմմէ գիտուն մարդ մի դիցեմ, զի եւ նա վերակացու լիցի ի վերա վարպետաց եւ շինուածոց: Այլ եւ՝ Բ (2) մոհթէմէտ, գոր նոքա սարգեար անուանեն, զի գրեցեն նոքա եւ զխարճն եւ օգնութիւն արասցեն վերակացուացն՝ կրել տալու զքարն եւ զկիրն ի գիւղորէից: Որ եւ ես իմոյ կողմանէ եղի գՂալայճի օղլու Ստեփանոս վարդապետն Արգրումցի, որ էր ընդ մէլիք Մկրտումին ի բլուրն այն ի վերա շինուածոցն եւ աշխատեցաւ անդ Ի (20) ատուրն՝ մինչեւ ցաւարտունն նորին:

Եւ կատարեցաւ զշինուածն, զի էր վրանաձեւ գմբեթայարկ, եւ ի ներքոյ՝ խորափիտ. եւ՝ ի տեղի ժողովելոյ ջուրց, գոր ի անձրեւ գայր ի վերնոտէ այնմ բլրին հորդեալ ճանապարհաւ ինչ եւ ժողովէր այնմ խորափտի սարբնճաձեւ, յորում վերա կայր շինուածն: Եւ յորժամ լնանի

աւելորդն, ելեալ ի ճանապարհէ խողովականման եւ հոսի գառ ի վայր ի ձորն:

Եւ գիւղ կայր ի ստորոտ բլրին: Եւ էր աւերակ ի բագուն ժամանակաց, որպէս պատմեն՝ Ճ (100) ամէն ի վեր: Չայն գիւղն քննեալ եւ գտեալ զգիւղականս ետ նոցա բախսամ մի, զի մաֆ լիցին եւ ԸՃ (800) սօմարի ցան եւ վար արասցեն եւ պահրայ, որ է օշոր, մի տայցեն: Որ եւ վաղվաղակի շինեցին զգիւղն, եւ կան բնակեալ այժմ գիւղականքն:

Եւ ինքն Խանն անց գնաց ի վերա Ղարսայ եւ պաշարեաց գնա ամսօրեայ ժամանակ: Արգիլեաց զգետն որ առոգանէր եւ արբուցանէր զքաղաքն, կտրեաց զջուրն, որ ի վերուստ գայր խողովակով ի բերդն: Եւ յամենայն կողմանց նեղ էարկ զքաղաքն: Եւ պատեալ պաշարեցան յամենայն դիմաց:

Այլ եւ ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Ղարս՝ յաջ եւ յահեակ, զմի կողմն ի վերա Պայագիտու կրկին, եւ զմիւս կողմն ի վերա Կաղզուանայ եւ ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, զերեցին զմարդիկք եւ զանասունս եւ բագում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թէոդուպօլսոյ: Եւ զերեցին զՆարինանու նահանգն, զՉաւախէթու, զՉլտրու եւ զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ քշեցին գայր եւ զկին, զծեր եւ զտղայ եւ տարան ի Խորասան՝ թուով ՉՌ (6000), որպէս եւ լսեմք:

Եւ ասպա զիջան եւ հազարացիքն ի բարձրավզութենէ եւ ի գոռոզութենէ իրեանց: Եւ ելեալ Արգրումայ արք

ումանք երեւելիք եւ եկին իբրեւ դեսպանս առ Խանն, որ դեռեւս նստեալ կայր ի վերա Ղարսայ: Եւ միաբանեալ ընդ դարսեցոց մեծամեծացն գնացին առ Խանն աղերս եւ աղաչանս, զի մի աւերեսցէ գերկիրն իսպառ: Եւ խոստացան տալ գԵրեւան, յորմէ բերկրեցաւ Խանն եւ պատուեաց գնոսս խիլայի: Եւ եղեալ ընդ նոսա խան մի, որոյ անուն խանի էր... սակաւ ձիաւորօք: Եւ յղեաց յԵրեւան: Որ եւ եկեալ նախ յանդիման եղեն Պապա խանին որ էր նստեալ ի քալարէն ունելով ընդ իր գԵրեւանայ խանն եւ գՍարտար խանն:

Եւ առեալ ի նմանէ եւս մարդ եւ հրաման եւ ապա մտան ի յԵրեւան. համոզել գնոսս ի խաղաղութիւն եւ տալ զբերդն Խանին:

Եւ յետ Գ (3) – Դ (4) ատուր ել համբաւ, թէ՛ ահա տալու եղան զբերթն այնու պայմանաւ, որ զպատերազմական պատրաստութիւնս, որ է հրահանելիքն եւ ճապխանայն, կիսիցեն. զկէսն տարցեն ընդ ինքեանս եւ զկէսն թողցեն ի բերդին: Եւ այնպէս ուխտ եւ դաշինք հաստատեցին: Եւ խնդրեցին սայլ, զի բարձցեն զինչս իրեանց: Որ եւ ետուն զՃ (100) սայլ երկրաւ, որում բարձեալ զկահն եւ զկարասինս իրեանց ելին ի բերդէն սեպտեմբերի ԻԲ (22) օրն երկուշաբթի, Վարագայ սուրբ խաչի պահոցն: Եւ տարեալ հասուցին մինչեւ եզրն Ախուր[ե]յան գետոյն, որ է Արփայչային՝ գնալ անտի ի Ղարս: Եւ սայլավարքն հանդերձ սայլիք դարձան իրաքանչիւր ի տեղիս իրեանց:

Իսկ Խանն դարձ արարեալ ի Ղարսայ գնաց ի Թիֆլիզ: Բայց մինչ կամէր չուել, հրամանագիր յղեաց Երեւանայ

խանին, թէ՛ «Առցես ընդ քեզ զԽալիֆայն եւ զքալանթարն, մէլիքն եւ զԵրեւանայ աղայներն եւ զքէտլխուտէքն եւ զայցէք առ իս ի յեզրն Ախուր[ե]ան գետոյսե: Բայց որովհետեւ դանդաղեցանք ի գնալն եւ ինքն աճապարեաց ի Տփխիզ, վասն որոյ ոչ կարացաք հասանել նմա ի ճանապարհին, այլ հետեւեցանք նմա եւ գնացինք ի Տփխիս օր մի յետոյ, քան զինքն, զի հոկտեմբերի Ա (1) շուեցինք յԷջմիածնայ եւ Երեւանու քաղաքն եւ ԻԷ (27) հասանք ի Թիֆլիզ քաղաքն:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.